## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 03.04.2014թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

**Մասնակցում էին**
**Ն. Մովսիսյան մարզպետի տեղակալ**
**Մ Աբգարյան մարզպետի տեղակալ**
**Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար**
**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ**
**ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ**

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների, ցրտահարության պատճառած վնասների, ոռոգման ջրի տրման ժամկետների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՋԱՏՅԱՆ/:

2. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և համայնքների բյուջեները գանձապետական համակարգ մուտքագրման աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. Մարզի բնակչությանը որակյալ խմելու ջրով ապահովելու, ՕԿՋ-ների վարակազերծման և վարարումներից պահպանման գործընթացի մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ /:

4. Ապրլի 1-ից մեկնարկված սանիտարական միամսյակին վերաբերող աշխատանքների մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ /:

5. Մայիսյան տոնակատարություններին նվիրված ՀՀ Արագածոտնի մարզում իրականացվելիք միջոցառումների մասին /Բաշ Ապարան/ /զեկ.՝ ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

Հայտարարություններ

Արագածոտնի մարզխորհրդի նիստում քննարկված հարցերը վերաբերում էին գարնան-գյուղատնտեսական աշխատանքներին, մասնավորապես, մարտի վերջին եւ ապրիլի սկզբին արձանագրված ցրտահարություններին եւ դրա հետևանքների վերացման խնդիրներին:

Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Յուրի Ազատյանը տեղեկացրեց, որ մեծապես վնասվել են ծիրանի, սալորի, կեռասի եւ այլ պտղատու այգիները: Կրած վնասի չափի մասին հստակ եւ ճշգրիտ պատկեր կստացվի մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրություններից հետո: Այդ աշխատանքները կավարտվեն առաջիկա 3-4 օրվա ընթացքում: Մարզպետ Սարգիս Սահակյանը համայնքապետերին տեղեկացրեց, որ ցրտահարություններից առաջացած իրավիճակի մասին նա զեկուցել է Հանրապետության Նախագահին եւ վարչապետին: Գյուղացիական տնտեսություններին հնարավորինս կցուցաբերվի անհրաժեշտ աջակցություն: Իսկ որպեսզի այդ աշխատանքներն արդյունավետ եւ օգտարար լինեն, մարզպետը հորդորեց համայնքների ղեկավարներին, իրենց գյուղացիական տնտեսությունների կրած վնասի մասին ներկայացնել հստակ եւ իրատեսական տեղեկատվություն: Նա ասաց, որ այդ խնդրի հետ կապված կազակերպչական հարցերի հանդեպ հետեւողական են երկրի ու մարզի ղեկավարներին Համայնքապետերի հետ քննարկվեց նաեւ մարզում գործող 7 ջրօգտագործող ընկերությունների գործունեության ընթացքը: Նշվեց, որ ոռոգման համակարգերում իրականացվել են մաքրման, վերանորոգման աշխատանքներ եւ այդ կառույցները պատրաստ են ջրամատակարարաման համար: Ըստ անհրաժեշտության, այն կարող է սկսվել արդեն իսկ ապրիլի 10-ից: Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանը ներկայացրեց համայնքների առաջին եռամսյակի սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը : Ըստ այդմ, սեփական եկամուտները, ընդանուր առմամբ, նախատեսված է հավաքագրել 896,4 մլն. դրամ, որից առաջին եռամսյակում հավաքագրվել է 152,7 մլն.-ը՝ կազմելով 17,0 %: Նա առանձնացրեց մի քանի համայնքներ, որտեղ սեփական եկամուտների զրոյական ցուցանիշ է արձանագրվել: Դա բացասաբար է անդրադառնում մարզի ընդհանուր ցուցանիշի վրա:

Բնակչությանը որակյալ խմելու ջրով ապահովելու, ՕԿՋ-ների վարակազերծման եւ վարարումներից պահպանման մասին խոսեց քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Դավայանը: Նա նշեց, որ ջրամբարների պահպանության խնդիրը պահանջու է համայնքների ղեկավարների եւ մարզային համապատասխան կառույցների համատեղ եւ միասնական աշխատանքը: Համայնքապետարանների գործունեության, մասնավորապես, տեղեկատվական կենտրոնների ստեղծման եւ էլեկտրոնային գործավարության կազմակերպման, քառամյա ծրագրերի կազմման եւ իրականացման, մի շարք այլ հարցադրումներ ներկայացրեց ՏԻՄ վարչության պետ Սիրազնիկ Հովսեփյանը: Քննարկված բոլոր հարցերին անդրադարձավ մարզպետ Սարգիս Սահակյանը: Ցրտահարության հետ կապված խնդիրներին նա հավելեց, որ հնարավորություն կա մարզի համայնքներին տրամադրել բանջարաբուսանային մշակաբույսերի շուրջ

10 տեսականու սերմեր, ինչի համար համայնքի ղեկավարներին առաջարկվեց ուսումնասիրել պահանջարկի դաշտը եւ ներկայացնել տեղեկատվություն: Նա նաեւ հորդորեց լինել պատասխանատու կառավարության կողմից իրականացվող ազոտական պարարտանութի, դիզվառելիքի, հացահատիկի սերմացուների տրամադրման ծրագրերը իրենց համայնքներում արդյունավետ իրականացնելու գործում: Տեղեկացվեց նաեւ, որ առաջիկայում կմեկնարկի կառավարության կողմից առաջնահերթ խնդիրների լուծման հինգերորդ հրատապ ծրագիրը: Քննարկվեց նաեւ մայիսյան տոնակատարությունների հետ կապված հարցը: Հանձնարարվեց առանձնակի ուշադրություն դարձնել Մայիսի 9-ին՝ Մեծ հայրենականի հաղթանակին եւ Շուշիի ազատագրմանը նվիրված տոնակատարության նախապատրաստությանն ու անցկացմանը: Այդ շրջանակում բարեկարգվելու է համայնքներում տեղադրված հուշարձանների շրջակայքը, կազմակերպվելու են հանդիսություններ, այցելություններ վետերաններին, կատարվելու են նվիրատվություններ: Տոնական մեծ միջոցառումներ է նախատեսվում նաեւ՝ նվիրված Բաշ-Ապարանի, Սարդարապատի հերոսամարտերին, Մայիսի 28-ին նշվող Առաջին հանրապետության օրվան:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ